Առցանց իրավունքներ

Սպառողի իրազեկում

Էլեկտրոնային առևտրի կայքերում խելամտորեն նավարկելու համար սպառողները պետք է հասկանան, ինչպես ստուգել կայքի արժանահավատությունը և նվազագույնը բացահայտել անձնական տվյալները:

- Երեխաներին չպետք է թույլատրել գնումներ կատարել առանց մեծահասակի ներկայության:
- Սովորեցրեք նրանց խուսափել այնպիսի կայքերից, խաղերից և հարցաշարեր պարունակող հարթակներից, որոնք չափազանց շատ անձնական տեղեկություններ են հայցում, կամ դրդում են սեղմել մի հղման կամ ներբեռնել ֆայլ՝ ծառայություններից օգտվելու դիմաց:

Սովորեցնենք երեխաներին պաշտպանել իրենց և ուրիշների անձնական կյանքի գաղտնիությունը

Թվային քաղաքացիական կրթության մասին Եվրոպայի խորհրդի այլ հրապարակումներ

- Educating for a video game culture – A map for teachers and parents (2021)
- Easy steps to help your children become a Digital Citizen (2020)
- Keeping young citizens busy at home during the Corona crisis (2020)
- Parenting in the digital age – positive parenting strategies for different scenarios (2020)
- Digital Citizenship Education Handbook (2019)
- Bullying: perspectives, practice and insights (2017)
- Internet Literacy Handbook (2017)

Լրացուցիչ տեղեկությունները կարող եք գտնել այստեղ՝
www.coe.int/education

Պաշտպանենք ենք անձնական կյանքի և տվյալների գաղտնիությունը

Սովորեցնենք երեխաներին պաշտպանել իրենց և ուրիշների անձնական կյանքի գաղտնիությունը

Հեղինակներ՝
Janice Richardson
Veronica Samara

Հատուկ շնորհակալություն Պասկալ Սերիերին

Safe.am

PREMS 038023

HYE

Ծնողներին

www.coe.int

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 46 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

EDUCATION FOR DEMOCRACY

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Լինել առցանց

Հասանելիություն և ներառում

Երեխաները համացանցում իրավունք ունեն լինել ապահով, և նրանց անձնական տվյալների գաղտնիությունը պետք է պաշտպանվի:

- Օգնեք երեխաներին զննարկիչի էջանիշերով ստեղծել տարիքին համապատասխան նախընտրելի կայքերի ցուցակ: Այդպես նրանք հեշտությամբ կխուսափեն ոչ պատշաճ բովանդակությամբ պատահական կայքերի:

Ուսուցում և ստեղծունակություն

Երեխաները պետք է կարողանան օգտագործել համացանցը ստեղծագործաբար և չխաթարեն իրենց անձնական կյանքի գաղտնիությունը՝ պահանջվածից ավել անձնական տվյալներ չտրամադրելով:

- Օրինակ ծառայեք երեխաներին և ցույց տվեք ինչպես կարելի է տեքստեր կամ նկարներ տեղադրել համացանցում՝ չբացահայտելով ձեր անձնական տվյալները և չխաթարելով գաղտնիությունը[1].

Մեդիա և տեղեկատվական գրագիտություն

Մեդիա և տեղեկատվական գրագիտությունը ենթադրում է անձնական տեղեկությունների մասին իմացություն և առցանց տեխնոլոգիաներից օգտվելու գիտելիք՝ ինչպես չխաթարել անձնական կյանքի գաղտնիությունը:

- Սովորեցրեք երեխաներին օգտագործել տեխնոլոգիաները պատասխանատու կերպով[1].
- Երբ նրանք տեղադրում են համացանցում լուսանկար կամ տեսանյութ, պետք է մտածեն՝ ինչ ազդեցություն այն կարող է թողնել իրենց և ուրիշների անձնական գաղտնիության վրա:

Լինել ապահով առցանց

Էթիկա և Էմպաթիա

Անձնական տվյալների պաշտպանությունը ենթադրում է մեզ հետ հաղորդակցվող մարդկանց անձնական կյանքի գաղտնիությունը՝ ցանցում և ցանցից դուրս:

- Հարցրեք երեխաներին՝ ինչ կզգան, եթե իրենց ընտանիքի մասին համացանցում հրապարակվի անձնական մի բան:
- Բացատրեք, որ պետք է հարգենք այլ մարդկանց անձնական կյանքի գաղտնիությունը, եթե ուզում ենք, որ ուրիշները հարգեն մերը:

Առողջություն և բարօրություն

Երբ հարթակները և ընկերությունները հավաքագրում են մեր անձնական տվյալները, օգտատերերը իրավունք ունեն իմանալու ինչպես են օգտագործվում իրենց տվյալները: Մենք իրավունք ունենք պահանջելու մեր անձնական տվյալների հեռացումը, երբ դրանք այլևս չեն ծառայում իրենց հավաքագրման նպատակին, կամ ապօրինի են օգտագործվում:

- Սովորեցրեք երեխաներին միշտ ձեզ դիմել՝ անձնական տվյալների գաղտնիությունը խախտվելու դեպքում:
- Սովորեք միասին, ինչպես կարելի է հեռացնել անձնական տվյալները համացանցային հարթակներից և ինչպես դիմել Անձնական տվյալների պաշտպանության պատկան մարմիններին՝ տվյալները չհեռացնելու դեպքում:

Էլեկտրոնային ներկայություն և հաղորդակցություն

Կարևոր է, որ երեխաները սովորեն համացանցում առողջ վարվելակերպ և իմանան, որ անձնական տվյալները նրանք պետք է պաշտպանեն առցանց գործողությունների և հաղորդակցման ժամանակ:

- Թվային պոչը տվյալների հետքն է, որը մենք թողնում ենք համացանցից օգտվելիս: Այն հետևում է մեզ ողջ կյանքի ընթացքում:
- Բացատրեք երեխաներին որքան կարևոր է հնարավորինս քիչ տեղեկատվություն թողնել համացանցում:

Առցանց իրավունքներ

Ակտիվ մասնակցություն

*Երեխաները **տարիքին և հասունության մակարդակին** համապատասխան պետք է տեղեկացված լինեն գաղտնիության իրավունքների մասին: Երեխաների՝ իրավունքներն իրացնելու և ինքնուրույն գործելու կարողությունը չի գերազանցում ծնողների՝ երեխայի անունից նույն իրավունքները պաշտպանելը և աջակցություն ցուցաբերելը:*

- Ընտանիքով քննարկեք ձեր մտահոգությունները, գաղափարներն ու ակնկալիքները անձնական տվյալների և գաղտնիության պաշտպանության ուղիների վերաբերյալ:
- Ստեղծեք ընտանեկան կանոնադրություն, որում գրեք ընտանիքի յուրաքանչյուր անդամի առցանց և անցանց գաղտնիության պաշտպանության համար կատարվելիք գործողությունների ցանկը:

Իրավունքներ և պարտականություններ

Քանի որ երիտասարդները առցանց տեխնոլոգիաների ամենաշատ օգտագործողներն են ու արագ են վարժվում, պետք է խրախուսել նրանց արտահայտել իրենց կարծիքը առցանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Ի՞նչ գիտեն և ի՞նչ են մտածում GDPR-ի (Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի) մասին:

- Երեխաների հետ փնտրեք «Պայմաններ» բաժինը նրանց նախընտրած հավելվածներից կամ սոցցանցերից մեկում:
- Արդյոք նրանք հասկանում են, թե ինչի հետ են համաձայնվում և ինչ են տրամադրում (լուսանկարներ, տեքստեր...), երբ ընդունում են այդ պայմանները: Արդյոք հասկանում են, որ ստանձնում են այնպիսի պարտականություններ, ինչպիսիք են տարիքային սահմանափակումները:

Գաղտնիություն և անվտանգություն

Երեխաները պետք է սովորեն զգույշ լինել, երբ առցանց կամ անցանց ծառայություններն իրենցից անձնական տվյալներ են հայցում:

- Երեխաներին ներկայացրեք կոնկրետ օրինակներ, թե որ տվյալները հանրայնորեն չհրապարակեն:
- Հիշեցրեք, որ առցանց որևէ անձնական տեղեկություն հրապարակելիս միշտ պետք է ձեզ հարցնեն, մինչև բավականաչափ կհասկանան անձնական կյանքի գաղտնիության նշանակությունը՝ ինքնուրույն գործելու համար:

1. https://rm.coe.int/easy-steps-to-help-your-child-become-a-digital-citizen/16809e2d1d